

սլատճառ եղաւ քրտնաթոր, մերթ անհաճ
 եւ կամ արդի մտածութեանց վրայ հիմ-
 նուած մեկնութեանց ու քմածին սրբա-
 գրութեանց: Բայց հնախօսութեամբ կարե-
 լի է աւելի բնականօրէն մեկնել զայն:
 Այդ տենչալեաց մէջ շատ յայտնի են, նոյն
 ինքն հին մատենագրութեան զանազան
 օրինակներէն ալ (տես Հյկզ.), խաւարտ ու
 խաւարծի արմատակիցները, որոց առաջինն
 է ուտելի փափուկ բոյս, եւ երկրորդը տըն-
 կոց կակուղ մասն. իսկ յարակից արտա-
 խոշր եւ տից, ուղիղք կամ ուղղելիք, ան-
 ծանօթ բացայայտիչներ են յայտնապէս:
 Արդ՝ Սաթինիկ կը տենչար ուտել զա-
 դոնք, որ ժամանակի յարգի տունկերը
 կը թուին, նստած իւր սիրական Արգա-
 ւանայ սեղանին շուրջ դրուած «բարձից»
 վրայ, զորս մեք շատ լաւ կը ճանաչենք
 արդէն (աստ, 55). ուր բարձն հոմանիշ է
 սեղանի, ինչպէս էր բազմականն ալ (աստ,
 121), եւ խաւարտն ու խաւարծին՝ ամբողջ
 կերակրոց: Միով բանիւ՝ Սաթինիկ կ'ու-
 զէր մասնակցիլ սիրելւոյն փառաւոր խըն-
 ճոյից, որ ուրիշ կերպ չէր կարելի՝ բայց
 եթէ դառնալով անոր կիներ: Հետեւաբար
 ճաշով այս վերջնոյս կը բաղձար, կամ
 բաղձալ կու տայ վիպասանը:

Եթէ հայ աւագանին եւ յաճախ եկե-